ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

# «Նկարչություն առանց սահմանների» միջազգային փառատօն-մրցոյթ

## *Յայտարարութիւն*

Յարգելի մշակութասէրներ,

Հէսսէնի Հայ Մշակութային Միութիւնը (ՀՀՄՄ) յայտարարում է **նկարչութեան փառատօն-մրցոյթ**՝ նուիրուած *ՀՀՄՄ հիմնադրման 55-ամեակին* (1968-2023թթ.), ինչպէս նաեւ հայ մեծանուն գեղանկարիչ *Մինաս Աւետիսեանի ծննդեան 95-ամեակին* (1928-1975թթ.)։

Փառատօն-մրցոյթին մրցանակ տրուելու է **3 անուանակարգում** մասնակից իւրաքանչիւր տարիքային խմբի (6-12տ. եւ 13-18տ.) համար՝

Մրցանակ Ա՝ **լաւագոյն գեղանկարչական աշխատանք**
Մրցանակ Բ՝ **յատուկ մրցանակ**
Մրցանակ Գ՝ **խրախուսական մրցանակ**

Երկրորդ եւ երրորդ փուլ անցած բոլոր մասնակիցները կը ստանան փառատօն-մրցոյթին մասնակցութեան **հաւաստագրեր**։

### Գրանցուելու ժամկէտները եւ նկարչական աշխատանքները ուղարկելու կարգը

**Ա) Գրանցման կարգը.**

Մրցոյթին մասնակցելու համար գրանցման ժամկէտն է՝ **01.06.2023թ. մինչեւ 14.08.2023թ. ներառեալ։**
Խնդրում ենք **գրանցուել**՝ յաղորդագրութիւն գրելով Միութեան էլ.փոստի հասցէին՝ info@armenier-frankfurt.de
Գրանցման յաղորդագրութիւնը պէտք է ներառի յետեւեալ տեղեկութիւնները՝

1. **Ազգանուն, անուն**
2. **Տարիք**
3. **Հասցէ**
4. **Թեմաների ընտրութիւն (տե՛ս մասնակցութեան պայմանները)**

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Բ) Առաջին փուլին մասնակցելու կարգը

Մրցոյթի **առաջին փուլի** մեկնարկն է՝ **01.07.2023թ.**, աշխատանքները յանձնելու **վերջնաժամկէտն է՝ 09.09.2023թ.:**
**Աշխատանքները պէտք է յանձնուէն DIN A4 ձեւաչափով:**
**Փոստով ուղարկելու դէպքում հաշուի է առնւում փոստային կնիքի առկայութիւնը ծրարի վրայ 09.09.2023թ. ամսաթուով:**

Գ) Փոստային հասցէն

**Armenischer KulturVerein in Hessen e.V.**
**Postfach 100129**
**60001 Frankfurt am Main**

Որպէս այլընտրանք կարող էք աշխատանքները **առձեռն** փոխանցել միութեան ամէնշաբաթեայ հանդիպման վայրում նկարչութեան ուսուցչուհի **Աննա Միքայելեանին** յետեւեալ օրերին՝

**08.07.2023թ**
**15.07.2023թ.**
**22.07.2023թ.**
**09.09.2023թ.**
**Ժամը՝ 15:00-18:00:**

Միութեան հանդիպման վայրի հասցէն է՝
**Hamburger Alle 52a**
**60486 Frankfurt a.M.**
**Ուշադրութիւն. Դպրոցական արձակուրդների ողջ ընթացքում ՀՀՄՄ շաբաթօրեայ դպրոցը նոյնպէս փակ է:**

Ե) Երկրորդ եւ երրորդ փուլերի ընթացքը

Փառատօնի **երկրորդ եւ երրորդ փուլերը**, ինչպէս նաեւ **մրցանակաբաշխութիւնը** տեղի կունենան **15.10.2023թ. ժամը 13:00-18:00-ին:**
Հասցէն՝
**Evangelische Emmausgemeinde**
**Alt-Eschersheim 22,**
**60433 Frankfurt am Main**

Հովանավոր

House of Resources RheinMain